«Գրանցված է»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
« 19» մայիսի 2015թ.
Պետական գրանցման համարը 10415104

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«15» մայիսի 2015թ. N 59-Ն

ք.Ստեփանակերտ

ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՇՆԱՆԱՑԱՆ ԵՎ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԱՑՈՒԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի ապրիլի 21-ի «Աշնանացան և գարնանացան մշակաբույսերի սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը հաստատելու մասին» N 238-Ն որոշման 2-րդ կետին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել սուբսիդավորման ենթակա աշնանացան և գարնանացան մշակաբույսերի սերմացուի տեսակները և դրանց սուբսիդավորման չափերը՝ համաձայն հավելվածի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա. Գալստյանին՝ սույն հրամանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2015 թվականի մայիսի 15-ի
N 59-Ն հրամանի

ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՇՆԱՆԱՑԱՆ ԵՎ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԱՑՈՒԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԵՐԸ

Հ/հ	Մշակաբույսերի սերմացուի տեսակները	Սուբսիդավոր-ման չափերը (%)	Ներկրված գին 1կգ-ի (ՀՀ դրամ)	Սուբսիդավորված գին 1կգ-ի (ՀՀ դրամ)
1	Եգիպտացորեն P 1758	50	3000	1500
2	Եգիպտացորեն P 31G98	50	3000	1500
3	Եգիպտացորեն Ցեֆրան	50	3000	1500
4	Եգիպտացորեն Պիոներ PR32T83	50	3000	1500
5	Եգիպտացորեն Կադիզ	50	3000	1500
6	Եգիպտացորեն Բերետ	50	3000	1500
7	Արևածաղիկ PR64E71	50	9000	4500
8	Կորնգան «Պեսչանիյ 1251» դաս 1-ին	50	850	425
9	Կորնգան	50	650	325
10	Հաճար	50	300	150
11	Կարտոֆիլ	8	250	230
12	Աշնանացան ցորեն I RP-«Կրասնոդարսկի 99»	18,5	270	220
13	Աշնանացան ցորեն II RP-«Կրասնոդարսկի 99»	19,2	260	210

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ